

Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի 2016 թվականի փաստաթղթաշրջանառության մասին

2016 թվականին մարզպետարան է մուտքագրվել՝ 10509 թղթակցություն, առաքվել՝ 6396 փաստաթուղթ: Այդ թվում ստացվել է ՀՀ Նախագահի աշխատակազմից՝ 3, ՀՀ Ազգային ժողովից՝ 5, ՀՀ վերահսկիչ պալատից՝ 2, ՀՀ կառավարության աշխատակազմից՝ 1199, ՀՀ նախարարություններից և գերատեսչություններից՝ 1189, հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայություններից և այլ կազմակերպություններից՝ 2363, տեղական ինքնակառավարման մարմիններից՝ 3652, քաղաքացիներից՝ 2051 դիմում, գաղտնի թղթակցություն՝ 45: ՀՀ Նախագահի աշխատակազմից մարզպետարանին վերահասցեագրվել է 24, ՀՀ Ազգային ժողովից՝ 1, ՀՀ կառավարությունից և վարչապետի աշխատակազմից՝ 68, նախարարություններից՝ 10, ՀՀ Նախագահի տիկնոջ գրասենյակից՝ 5 դիմում: Ստացված բոլոր դիմումներին սահմանված կարգով ընթացք է տրվել:

Կանոնակարգված է մարզպետի մոտ քաղաքացիների ընդունելությունը. ամսական մեկ անգամ մարզկենտրոնում (յուրաքանչյուր ամսվա վերջին երկուշաբթի օրը) կատարվել է քաղաքացիների ընդունելություն: Բացի այդ, քաղաքացիների ընդունելություն է կատարվել նաև մարզպետի՝ համայնքներ կատարած ամենամսյա այցելությունների ժամանակ: 2016 թվականին կատարվել է 808 քաղաքացիների ընդունելություն: Մարզպետի մոտ ընդունելության համար հերթագրված և ընդունելությանը մասնակցած քաղաքացիների վերաբերյալ տեղեկատվությունը տեղադրվում է մարզպետարանի պաշտոնական կայքէջում:

Աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների ղեկավարները քաղաքացիների ընդունելությունը կազմակերպել են ամենօրյա, աշխատանքային կարգով:

Քաղաքացիների ընդունելության, նրանց դիմումների, բողոքների ու առաջարկությունների քննարկումների մասին հաշվետվությունը և այդ աշխատանքների վիճակի մասին ամփոփ տեղեկատվությունը սահմանված պարբերականությամբ ներկայացվել է ՀՀ կառավարություն ու ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն:

Քաղաքացիների ընդունելության արդյունքների մասին տեղեկատվություն է ներկայացվում նաև ՀՀ Նախագահի աշխատակազմ: